ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լրագիրս ելլայով որ և իցէ հանապաղ յայտարարութիւն պիտի ըլլայ տալ ամէն 4 տարի հատ 1 նոթեմ տրիամն։



Հրատարակվամբ ընթերցողաց ոչ ի ինչ Տոքեան բռնաւորութեան ներքոյ ենէն ի ճ տարիէ։

Է ՏԱՐԻ ՅՈՒՆՎԱՐ 4. 1864 ԱՄԻ №1.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ազգերը առանց քաղաքական կեանքի իսկապէս անկեանք են, նոյնա գործունէութիւնը, իբրև մարդոց, մարմնոյն համար իրան վայելուչ նշանակութիւնը չէ կարող ունենալ առանց քաղաքական կեանքի, որի մէջ միայն ազգերը կարող են իրանց բոլոր հոգևոր և մարմնաւոր կարողութիւնները զարգացնել, կատարելագործել ու թէ իրանց և թէ բոլոր մարդկութեան օգտի համար ի գործ դնել։ Այսպէս ուրեմն իսկապէս ազգ անունը կարող են կրել քաղաքականութեան մէջ միայն այն ազգերը, որոնք քաղաքականապէս ապրում են աշխարհիս վերայ և կամ նոքա, որոնք պատրաստվում են նորա համար և կրում են իրանց մէջ դոնէ այն կեանքի սերմն, որից ժամանակով պէտք է նորա կեանքի ծառը դուրս գայ, աճի, զօրանայ և մարդկութեան քաղաքական կեանքի ազարակի մէջ տեղ բռնէ, նշանակութիւն ստանայ և պտուղ տայ, թէ իրանց և թէ ուրիշների համար։

Բայց որովհետև ազգերի մէջ առաւելապէս եւրոպայի ղեկաւոր ազգերն են, որոնց քաղաքական կեանքը աւելի նշանաւոր են և կատարեալ, ուստի և անցեալ 1863 թուականի «Մեղու Հայաստանի» լրագրի քաղաքական մասնի մէջ, տեղիք ունեցան միայն նոցա մէջ ծագած հարցերը, որոնք մի կողմն ժամանակ, կարելի է, անուանել բոլոր մարդկութեան մէջ եղած ղեկաւոր հարցերը, ըստ որում մարդոց բնակութեան կենդրոնը իսկապէս եւրոպան է, որի կեանքից կախուում ունի բոլոր մարդկութեան կեանքը, որի զարգացումից կախած է և մարդկութեան միւս ազգերի զարգացումն, այնպէս որ եւրոպայի ազգերի կեանքն է իսկապէս ներքնօրեական կեանքը, իսկ միւսացած ազգերինը, ըստ մեծի մասին, կրաւորական է։

Այս հարցերի առաջինը, որնոր 1863 թուականի սկզբում պարապեցնում էր եւրոպայի մեծ տէրութիւնները, և որի համար եղան բաւական երկար բանակցութիւններ աէրութեանց մէջ, գրեթէ բոլորովին վերջացաւ Դանեմարքայի Գէորգ իշխանի ցռնաց թագաւոր ընտրվելովը և այժմ եթէ միայել են մի քանի վճռվելի խնդիրներ յունաստանի մէջ. սոքա առաւելապէս ներքին խնդիրներ են, որոնք արտաքին քաղաքականութեան նիւթ և առարկայ լինել չեն կարող, այնպէս որ 1863 թուականը մարդկութեան մի բաւականին նշանաւոր խնդիրներից մէկն վճռեց։

Սրանից յետ դլխաւոր խնդիր դառաւ եւրոպայի մէջ Լեհաստանի հարցը, որնոր 1863-ին սկզբում ծագեցաւ Լեհաց ապստամբութեամբը։ Այս հարցը առաջին ծանրակշիռն էր, ուստի և ամէն խնդիրներից աւելի պարապեցնելով եւրոպական մեծ տէրութիւնները, Հայաստանի Մեղուի քաղաքական մասնին էլ առաւել նշանաւոր առարկան դարձաւ բոլոր անցեալ տարին։ Այս խնդիրը դեռ և անվճիռ է մնացած։ Երբ այս հարցը ծագեցաւ, եւրոպական երեք մեծ տէրութիւնները, այսինքն, Ֆրանսիան, Անդղիան և Աւստրիան սկսան միջամտութիւն անել և Ռուսաստանի առաջին միջնորդ դառնալ, որ կարողանան խաղաղութեամբ և հանգստութեամբ վճռել այս նշանաւոր

հարցն էլ, որնոր վերջովը մ գրեթէ բոլոր Եւրոպան և սպառնում է նորա խաղաղութեանը: Սորա համար յիշեալ երեք մեծ տէրութիւնները քանիցս անգամ ուղղեցին Ռուսաստանին ծանուցագիրներ, որոնց մէջ պարունակվում էին գլխաւորապէս վեց յոդուածներ, որոնց հիման վերայ պէտք է հաստատվէր Լեհաստանի մէջ խաղաղութիւն և նորա կառավարութիւնը կարգի ընկներ, բայց այս պահանջմունքները Ռուսաստանին իրաւանց հակառակ և անձեռնտուս երևելով մերժուեցան գոնէ նորա կողմից: Այս մերժումից յետոյ, յայտնի բան է, Եւրոպացոց տէրութեանց էլ չմնաց տեղիք դեսպանական կապակցութիւններ անելու Ռուսաստանի հետ, որնոր աշխարհս յայտնեց, որ այդ հարցը իր ներքին խնդիրն է, ուրեմն և ինքն պէտք է վճռէ նորան, ապստամբութիւնը Լեհաստանի մէջ բոլորովին ճնշելից յետ:

Այս մասին եղած բանակցութիւններից թէ Ռուսաստանի հետ և թէ միւս տէրութեանց միմեանց մէջ եղած խօսակցութիւններից և գրագրութիւններից երևեցաւ, որ Ֆրանսիան մեծ համակրութիւն ունի դէպի Լեհաստանը և կամենում էր այն հարցը վճռել Լեհաստանի անկախութիւնը հաստատելով, որից դուրս նա նորա վճռվելը անհնարին է համարում և այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ կարևոր համարելով Աւստրիայի դաշնակցութիւնը, աշխատեցաւ զանազան խօսակցութիւններով և նորա ունեցածները ապահովացնել խոստանալով սրան սերտութեամբ կապել իր հետ: Ցայսմիկ բան է, այս գլուխ գալից յետ Նապոլէոն կայսրը միաք ունէր զէնքով վճռել այն, ինչոր բանակցութիւնով գլուխ չկարաց և այնպէս Լեհաստանը ազատելով, Ֆրանսիան պէտք է զօրացներ, դանելով նորա համար մի զօրեղ և անձնատուր դաշնակից: Բայց Անգղիայի արքունիքը, կասկածելով Նապոլէոնի քաղաքականութեան պարզամտութեան վերայ, որի մասին իրաւունք էլ ունէր, և երկնչելով Ֆրանսիայի ապագայ զօրութիւնից, կարողացաւ համոզել Աւստրիան, որ չհաւէ Ֆրանսիայի երկմիտ և կասկածելի քաղաքականութեանը, որնոր նրան միայն ձկտաս կարող է բերել և ոչ մի օգուտ, ազատելով Լեհաստանը, որնոր վաղ թէ ուշ կ'խլէ նրանից Գալեցիայի երկիրը: Աւստրիան, կարծես, քնից զարթնացաւ, և սկսաւ բոլորովին փոխել իր մինչև յայժմ ունեցած յարաբերութիւնը Ֆրանսիայի հետ ու Անգղիայի արքունիքի քաղաքական ընթացքը բռնեց ու բարեկամական կապակցութիւններ անել սկսաւ Ռուսաստանի հետ: Նապոլէոն կայսրը տեսնելով այսպէս անյաջողութիւն, մտածեց մի նոր միջոց իր նպատակին հասնելու համար այսինքն, այն ինչոր Աւստրայի ձեռքով կամենում էր անել, միտքը դրից բոլոր Գերմանիայի և այլ տէրութեանց դործակցութեամբ գլուխ բերել: Իրրև յարմար միջոց այս բանի համար ընտրից մի ընդհանուր եւրոպական դաշտաժողով կազմելը, որնոր բոլոր Եւրոպական քաղաքական հարցերը վճռէր ու ազգերի յարաբերութիւնները և իրաւունքները նոր դաշնագրութեան պայմանների հիման վերայ հաստատէր, որովհետև մինչև յայժմ եղած դաշնագրութիւնները քան մեծի մասին խախտած են, խանգարված և ազգերի այժմեան վիճակի համար անյարմար: Ցայսմիկ բան է, այս ժողովի մէջ էլ առաջին տեղը պէտք է բռնէր Լեհաստանի հարցը: Միայն այս էլ ինչպէս երևեցաւ յաջողելու չէ, որովհետև շատ Եւրոպական տէրութիւններ Անգղիային հետևելով մերժեցին դեսպանաժողովը, յայտնելով, որ նա չէ կարող բնաւ կազմվել և ոչ էլ որևիցե խնդրի վճիռ տալ, որովհետև խնդիրները այնքան շատ են, որ եթէ նորա ամէնքն էլ զարթելու լինին ժողովի մէջ, գրեթէ ամէն տէրութիւններն էլ սահմանած պէտք է լինին մի մի զոհ անելու նոցա վճռման համար, որ ոչ ոք չի ցանկանալ, ուստի և ժողովը չէ կարող կայանալ և եթէ կայանալու էլ լինի, ոչ մի արդիւնաւոր հետևանք չէ կարող ունենալ: Ահա այս վիճակի մէջ է այժմ Լեհաստանի հարցը, որի համար այնքան խօսակցութիւններ, բանակցութիւններ եղան տէրութեանց մէջ. ծանուցագիրներ խրկվեցան, յորդորանքներ, իրատներ, խնդիրներ ու սպառնալիքներ եղան և մինչև յայժմ ոչ մի հետևանք չունեցան, այնպէս որ հարցը անվճիռ և մեռելը մնացած է: Բայց այն էս պէտք է աչքի առաջև ունենալ, որ ձմեռն վրայ հասաւ և տէրութիւնները ամէնքն էլ պատերազմական պատրաստութիւններ են տեսնում, այնպէս, որ այս ներկայ տարուցս գարունքը շատ բան ներ է խոստանում:

Այս հարցը չվճռված, զարթեցաւ 1865 թուականի վերջերին մի նոր և նշանաւոր հարց էլ, որնոր նմանապէս գրաւեց Եւրոպական մեծ տէրութիւնների ուշադրութիւնը: Այս հարցն է Շլեզվիգ—Հոլշտէյնի դքսութիւնների հարցը: Այս հարցն էլ շատ պարապմունք է արքունիքները, մանաւանդ նորա համար, որ սորա վճռվելից է կախուած շատ տէրութիւնների նշանակութիւնը ու քաղաքական կշիռը Եւրոպայի հիւսիսային, մանաւանդ Բալտիկ ծովի վերայ: Թէև այս երկու դաւառները մի նշանաւոր ընդարձակ և բազմամարդ երկիրներ չեն, միայն նոցա տիրապետութիւնից շատ բան է կախված: Եթէ նորա կ'մնան Դանիայի իշխանութեան տակ, Եւրոպայի հիւսիսային կ'շարա-

նակվի նայն կարլը, ինչոր մինչև յայժմ էր: Իսկ եթէ նորա Դանիայից բաժանվելով, բոլորովին կ'միանան Գերմանիայի հետ, սա, տէր դառնալով այն ծովեզերեայ երկիրների նաւահանգիստներին, կարող է շատ զօրանալ ծովի վերայ և ժամանակով ախոյեան դուրս գալ Պալտիկ ծովին այժմ տիրապետող կամ այն տեղ կշիռ ու նշանակութիւն ունեցող տէրութեանցը: Բրիմն և այս տէրութիւնները կամենալով ապահովացնել հիւսիսային մինչև յայժմ ունեցած իրանց նշանակութիւնը և կշիռը, ամէն կերպով ջանք են անում պահպանել այնտեղ իրերի ներկայ կարգը: Այս հարցն էլ որի համար շատ վրդոված են գերմանացիք, որոնք կամենում են յիշեցնել երկիրներին տիրելով քաղաքականապէս ծովի վերայ մի նշանակութիւն ունենալու ինչպէս իրանց, իրրև մի հարուստ, լուսաւորեալ և 40 միլիոնից աւելի անհատներից բազկացած ազգին կ'վայելէ:

Երրորդ վճռելի եւրոպական խնդիրն է Իտալիայի հարցը, որնոր, իտալական պատերազմից յետո, առանց վճռման մնաց Նապոլէոն կայսեր խորամանկ քաղաքականութեան պատճառով: Իտալիայի հարցը նորա վերայ է կայանում, որ իտալացիք պահանջում են նորա միանալը մի իշխանութեան տակ, այնինչ մինչև յայժմ Հռոմը իր շրջապատներով և Վենետկի երկիրը բաժան են մնացել Իտալիայի թագաւորութիւնից, առաջինը Նապոլէոն կայսեր ընտրօրքը պապի իշխանութեան տակ, իսկ երկրորդը Աւստրիայի կայսեր բռնութեան տակ: Հռոմը և Վենետկը Իտալիային են պատկանում ամենայն մարդկային իրաւամբ, որով հետև նորա հետ անբաժան կապուած են ամէնկերպով: Նոցա բնակչաց ծագումն, լեզուն, կրօնը, զրականութիւնը, լուսաւորութեան ազգութիւնը և վերջապէս կամքը մէկ է: Ուստի իրերի ներկայ կարգը Իտալիայի մէջ (այսինքն բաժանած մնալն) անբնական բան լինելով, չէ կարող միշտ մնալ: այլ վաղ թէ ուշ պէտք է ազգի կամքին համեմատ վճռվի:

Մնացած եւրոպական խնդիրներն են Մոլդո – վալաքիայի մէջ եղած աննշան անկարգութիւնները և գրեթէ ամէն տէրութեանց մէջ ծագած երկպառակութիւնները ազգերի և իրանց կառավարութեանց մէջ իրաւանց և արտօնութեանց համար, որոնք յայտնի բան է, թէև շատ նշանաւոր են մարդկութեան համար, միայն չեն կարող տէրութեանց արտաքին քաղաքականութեանը առարկայ դառնալ:

Յուսալի է, որ ներկայ տարւոյս մէջ այս հարցերից շատերը կ'վճռվին, որովհետև եթէ տէրութիւնները այս տարի էլ նոցա վճռման համար միայն բանակցութիւններ անելու լինին, ապա աւելի հեռանալ կարող են ունենալ, քան արդէն նրանցից ամէն մէկն էլ իր առաջին և պահանջած աւելի ազդեցութիւն կարող է տալ այն պատերազմական պատրաստութիւններով, որոնք անցեալ տարուան մէջ արել է: Բայց եթէ այս էլ չ'յաջողի, այն ժամանակ պատերազմի բազդը կ'քակէ ամէն քաղաքական կնճիռները, որով յուսալի է, թէ այն հարցերի վճռելուն այս տարի եթէ չը հասնի էլ մարդկութիւնը, գոնեա կ'մօտենայ նրան:

Եւրոպայից դուրս եղած հարցերից գլխաւորն Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգների մէջ ստրկած երկպառակութիւնը և արիւնահեղ պատերազմն է, որի նկարագրութիւնը կարող է միայն սարսափեցնել մարդոց, որովհետև նա լիքն է բարբարոսութիւնով, որով մարդիկ այնտեղ միմեանց հետ վարվում են:

Այս նահանգները, որոնք մօտ 32 են թուով, կազմում են, իրանց ներքին կառավարութեան կողմանէ, միմեանցից անկախ տէրութիւններ, միայն արտաքուստ ամէնքը միասին բազկացնում են մի ընդարձակ և հզօր հասարակապետութիւն: Ձկայ երկրում գրեթէ մի ուրիշ երկիր, որնոր ունենար այնպէս պէսպիսութիւն ամէն կողմից, ինչպէս այս հասարակապետութիւնը: Նորա բնակչաց ծագումն, լեզուն, կրօնը, լուսաւորութեան աստիճանը, պարապմանց եղանակը, իրերի վրայ ունեցած հասկացողութիւնը և բարոյական կանոնքը շատ բազմազան են: Երկրի զանազան մասների բարեբերութիւնը, նոցա բնութիւնը և բնական հարստութիւնները, որոնք շատ ազդեցութիւն ունին մարդոց կենցաղավարութեան և պարապմանց եղանակի վերայ, նոյնպէս տարբեր են: Այսպիսի պէս պէս տարբերները չէին կարող երբեք ձուլվիլ միասին և մի մարմին կազմել, եթէ մի զօրեղ և ամէն բանի յաղթահարող գաղափար չէր զսպել ամէն մէկի բռնութիւնը միասի վերայ: Այս գաղափարն էր ազատութեան գաղափարը, որնոր այնքան ժամանակ չէր թողնում այս տարբներուն միմեանց դէմ մրցաւելու, այլ ծողնում էր ամէն մէկին աճելու իր համար և կերպարանք առնելու, իսկ այժմ նոյն իսկ ազատութեան հակառակ գաղափարը պատճառ դառաւ այն արիւնահեղ պատերազմին յիշեալ նահանգների մէջ, որնոր մինչև յայժմ էլ շարունակվում է:

Այս նահանգները, որոնք 1783-ին ազատվեցան Անգլիայի իշխանութիւնից վերջապէս պաշտպրութեամբը, իրանց 80 տարուայ անկախութեան ժամանակ կամայ կամայ բազմացան զօրացան, և հարստացան: Նորա գլխաւորապէս երկու մասն բաժանվեցան, իրանց լուսաւորութեան աստիճանով և մարդկային իրաւանց վերայ ունեցած ուղղութիւններով, և այս երկու ուղղութիւններն էլ ամէնքը իրանց համար առաջ գընացին: Այս երկու մասերն են վաճառաշահ, լուսա-

ւորհալ և մարդոց իրաւանց հաւասարութիւնը ճանաչող Հիւսիսային նահանգները և երկրագործ, տիպար ու մարդկային իրաւանց հակառակ եղող սարկութիւնը պաշտպանող հարաւային նահանգները: Պարզ բան է, որ այս երկու բոլորովին միմեանց հակառակ տարրները չէին կարող միշտ միմեանց հետ հաշտ մնալ, ինչպէս լոյս ու խաւարը: Ազատասէր հիւսիսային նահանգները վերջապէս ախան պահանջել, որ սարկութիւնը, երբև մարդկութեան անպատուութիւն բերող և մարդոց հոգ անվայել գործ, ընդմիշտ իրանց սերմանութեան միջից, իսկ հարաւային նահանգների երկրագործ բնակիչները, որոնք կարօտութիւն ունին սորուհների, իրանց ընդարձակ ագարակները արժանութեամբ մշակելու համար, իրանց անձնական շահի պատճառավանհամաձայն գանվեցան հիւսիսայինների պահանջին, որ ըից ծագեցաւ ահա այն սարսափելի պատերազմը նոցա մէջ, որին մինչև ցայժմ քանի հարիւր հազար մարդիկ զոհ եղան: Այս հարցն էլ լոյսի բան է, վազ թէ ուշ անհրաժեշտ վճռելու է, նախախնամութեան օգնութեամբը, համաձայն հիւսիսայինների պահանջմանը, որով մարդկային իրաւունքը և ազատութիւնը յաղթող պէտք է հանդիսանայ մարդոց շահախնդրութիւնից ծագած բռնութեանը վերայ:

Երկրիս մնացած մասներում եղած բոլոր հարցերն էլ գրեթէ աննշան խնդիրներ են և ըստ մեծի մասին բազկանում ազգերի փոքրիկ շարժումներից և կըռռալութիւններից, առաւելապէս իրանց բռնաւոր կառավարութեանց դէմ. իրանց մարդկային իրաւանց համար, որի հասկացողութեան դեռ առաջին կայծը սկսվել է նոցա մէջ Եւրոպացիների հետ ունեցած քաղաքական և առևտրական կապակցութիւններից, որոնց միջոցով փոքր ինչ մտած է գործել նոցա մէջ վերջինների գաղափարների մի քանիսը մարդուս նշանակութեան և իրաւունքների վերայ աշխարհիս երեսին:

Ահա այս է մարդկութեան մէջ եղած գլխաւոր հարցերի վիճակը տարւոյս սկզբում:

Մեղու Հայաստանի լրագիրը պատիւ կ'ունենայ հաղորդելու իր յարգոյ ընթերցասէր, թէև փոքրաթիւ, բայց հետաքրքիր և բանասէր ընթերցողներին յիշեալ հարցերի գանազան կերպարանքները, և ուղղութիւնը և նոցա վճռելու ձևը կամ անվճիռ մնալու պատճառները նորիկայ տարւոյս մէջ:

Ա. ԶԳ Ա. ՅԻՆ

Մեր ազգային և բարոյական կեանքի անդաստանը անցեալ 1863 թուականի մէջ առանց մշակութեան և պաղպաղերութեան չէ մնացած: Մեր ազգի պատմութեան մէջ անմոռաց պէտք է լինի 1863 թուականը, որովհետև այս տարուան մէջ մեր տաճկաբնակ Հայերը արին մեծ և նշանաւոր քայլ դէպի ապագայ բարելաւ և նշանաւոր կեանքը, գրեթէ 300 տարեկան անկանոն, անշան, տմարդի և արտաքին ու ներքին բռնաւորների կառավարութեան լծից ազատվելով ազգային սահմանադրութեան հաստատվելովը, սոցան գոնէ յոյս ապագայում աւելի երջանիկ օրեր ունենալու համար: Եւ շատ իրաւացի է նոցա այս յոյսը, որովհետև սորա պատճառները այժմ ևս արդէն սկսում են վայելելու մեր տաճկաբնակ եղբայրները: Առաջին և գլխաւոր բարի պատճառը նորա է սահմանադրութեամբ ընտրած նոր Պատրիարքը, սրբազան Գօզոս Արք Եպիսկոպոսը, որ մեծամեծ յոյսեր է տալիս ամէն բարեմիտներին, որոնք յոյսի բան է, իրանք էլ սիրով և խոհեմութեամբ նորին սրբազնութեան գործակից լինելով օրինաց համաձայն աշխատ կ'լինեն ազգի բարեմասնաւոր վերքերը բժշկելու ու նորան ազատելու շատ այնպիսի բարոյական ախտերից, որոնք սպառնում էին բոլորովին կրծելու նորա հոգին և մարմինը: Ինչպէս երևում է, ազգը յիրաւի կարող է իր յոյսերը կատարած տեսնել ոբովհետև, երբ նորին սրբութեան յայտնեցին Մանիսասում իր ընտրութիւնը, նորընտիր Պատրիարքը, որոնք երևի շատ արամատ և հոգուտ էր ազգի անհանգիստ վիճակի և նորա մէջ եղած երկպառակութեանց վերայ, ասաց յետագայ խօսքերը, «Եթէ պիտենամ որ ինձմով ազգային յառաջադիմութիւն պէտք է լինի և կրօնակրութիւնները պէտք է ջնջվին, կ'աշխատիմ և զոհ կ'լինեմ: Կասկած չկայ, որ այսպիսի ազգասէր և անձնուրաց Հովուի ջանքի վերայ եթէ դնելու լինինք և բարեմիտ ու անձնանուէր երիտասարդաց զոհաբերութիւններն էլ շատ գործ կարելի է տեսնել յօգուտ թըշուառ ազգին:

Բացի սրանից ինչպէս Տաճկաստանի հայ լրագիրներից տեսնում ենք, շատ տեղերում ազգայինք միշարժումն են ցոյց տալիս դէպի աւելի լաւը, հասկանում են իրանց նեղճ վիճակը և ձգտում են դուրս գալու այս վիճակից ու մտնելու այնպիսի դրութեան մէջ, ուր կարող են իրանց մարդութեան իրաւանց գոնէ մէկ մասը վայելել: Այս բանի մէջ էլ շատ արդիւնաւոր են բարեմիտ եկեղեցական և աշխարհական անձինք, որոնք հասարակաց շահը իրանց անձնականից բարձր դասելով, ամէն նեղութիւն, ամէն վիշտ և հալածանք առաջնեան անբնական կարգը պահպանել ուզող բռնաւորներից յանձն առնում են, և աշխատ են լինում կարօտ և թշուառ բազմութեան հետ միանալով սորա կեանքը բարելաւելու ու իրաւունքները և սեպհականութիւնները պաշտպանելու յափշտակողնե-

րի և գոլերի դէմ: Այսպէս ահա շատ անգամ կարգուում ենք Տաճկաստանի լուսոյ իրներում Օսմանեան տէրութեան զանազան գաւառներից եղած գանգատներ ժողովրդեան կողմից մի քանի անխիղճ անձինքների դէմ, որոնք կամ եկեղեցական գումարները յափշտակում են կամ նոր բարեկարգութեանց հակառակութիւններ են անում մատնութեամբ, զրպարտութեամբ, քսութեամբ և կաշառատուութեամբ: Մեր աչքում այս խլրտուքն էլ մի բան է ժողովրդեան կողմից ու յոյս է տալիս, որ նա քանի մի բանում յաջողութիւն գըտնելով, աւելի վստահ կ'լինի ու ոյժ կ'ստանայ, կամացց կամաց իր սեպհական և օրինաւոր պահանջները գլուխ տանելու, որին յայտնի բան է, ամէն կողմանէ կ'նպաստէ Աղգային ժողովը այսուհետև իր բարեմիտ նախադահի հետ միասին:

Այն էս մի բարեգուշակ բան է, որ Տաճկաստանի ազգայինք անցեալ 1863 թուականի մէջ բաւական զբաղած էին գպրոցների հիմնարկութեամբ, մանաւանդ այնպիսի տեղերում, որոնց բնակիչները այսքան հասիւր տարիներ զուրկ էին ճնոցած բողոքովին դիտութեանց և ուսման լոյսից ու շրջում էին այնպիսի խորը խաւարի մէջ, որ մինչև անգամ իրանց տգեղ կերպարանքը չէին կարոզանում տեսնելու: Բայց այն դըպրոցների մէջ, որոնք կային, շատ բարեկարգութիւններ եղան, իսկ եթէ միքանիսի մէջ անկարգութիւններ և աւելի յետադէմ ուղղութիւններ էս մտան, սոքա էլ պէտք է, այժմեան ժամանակի պահանջմանցը և ոգուն նայելով, համարվին նախապատրաստութիւններ դէպի ապագայ աւելի նշանաւոր բարեկարգութիւնը և յառաջադիմութիւնը:

Ռուսաստանի մէջ էլ պէտք է, խոստովանենք ճշմարտութեամբ, որ մեր ազգային պէսպէս գործքերը բաւական յառաջադիմութիւն ունեցան նորին վեհափառութեան հայրական խնամքով: Թէ եկեղեցական գործքերի մէջ և թէ զանազան ազգային հոգևոր գպրոցների մէջ եղան բաւական նշանաւոր բարեկարգութիւններ, որոնք ժամանակով պէտք է, իրանց քաղցը պտուղները տան ազգին վայելելու, այնպէս որ մենք Ռուսահայեաց հայերս էլ կարող ենք ցոյց տալ մեր Տաճկահայոց եղբարցս 1863-ին մեր մէջ եղած այնպիսի գործքեր կամ սոցա սկիզբն, որոնք կարող են ապագոյց լինել, որ մենք էլ բոլորովին քնած չենք եղել կամ անզործունէութեան մէջ չենք անցկացրել անցեալ տարին, այլ մեր մէջ էլ երևել է մի շնչառութեան նշոյլ, թէև շատ թոյլ: Սորա պատճառներից մէկն էլ մեր վաստակած կարողութիւնն է եղել, որ չենք կարողացել աւելի ծանր բեռներ բարձրացնել ու աւելի դժուար աշխատանքների դիմանալ:

Այս եղածներին նայելով մխիթարվում ենք այն յուսով, որ ներկայ տարուց մէջ այն գործքերը, որոնք անցեալ տարի սկիզբն առին, աւելի առաջ կ'երթան և կ'կատարեալ գործվին, որովհետև ամէն գործ տեսնող անձինք կ'բազմապատկեն իրանց ջանքը և աշխատութիւնը, նոցա պտուղները տեսնելով:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻՈՑ ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆԸ

«Сѣверная Пчела» լրագիրը իր թիւերու 153-դ համարի մէջ տպել էր մէկ յօդուած այս մակագրութեամբ «Изъ Ростова на-Дону». Ցետ քանի մի ժամանակաց նոյն լրագրի 208-դ համարի մէջ երևեցաւ այն յօդուածի արդարակորով պատասխանը այս վերաոտութեամբ՝ По поводу статьи «Изъ Ростова на-Дону»: Մենք նոյն ժամանակէն սկսած՝ կարդալով այս հերքումն և այս չաւտղութիւնը, արծարծում էինք խղճմտանքի դատաքննութեան ներքոյ և պատրաստ էինք մանրակրկիտ խուզարկութեամբ՝ թէ արդեօք կայ նորա մէջ կամ կողմնապահութիւն, կամ մէկ անոտի ցոյց հայրենասիրութեան: Այսպիսիներէն ոչինչ չըզտնելով բարեխիղճ դրութեան մէջ՝ յօժարեցանք նոյնութեամբ աւանդել մեր ընթերցասէր հայրենակցաց, պահելով նորա բովանդակութեան յարմն չափ անդամ:

Այս գեղեցիկ գործը մէկ անջնջելի արձան պիտի մնայ Նոր Նախիջևանայ անմեղութեան չաւտղութեան համար, և ամէն հայ պիտի մտաղիր և մտաղիր աղգասիրութեամբ կարդայ. եթէ կայ նորա սրտի մէջ հարենկցութեան կայծ, հայրենասիրութեան բոցով վառուած:

«Сѣверная Пчела» (ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ՄԵՂՈՒ) լրագրի 153-ի համարի մէջ՝ Изъ Ростова на-Дону (ԴՈՆ ԳԵՏԻ ՄՕՏԻ ՌՈՍՏՈՎԷՆ) մակագրութեամբ տպած յօդուածը՝ թէև երեւում է մէկ պարապ ժամանակ ունեցողի պարզմտութեամբ պատմած անցք, բայց չըկարողացաւ մեր ուշադրութեան չըտալ պիտի առնուլ, որովհետև ծանօթ եւ տեղեակ ենք այն յօդուածի մէջ բացատրած երկու քաղաքի և նոցա բնակիչներու պատմութեան և մէկ մէկու հետ ունեցած յարաբերութեան: Թէպէտ մենք դեռ արժանացած չենք այն պատուին, որ ճանաչում լինինք այս յօդուածի Հեղինակ պարոնին, սակայն չենք կարող վճռել, թէ արդեօք այս պատմութեան մէջ նորա ծածուկ մտքերն են թաքցրած, թէ այն ամէնը դրուած են ապապարանօք, այսինքն՝ արդեօք պ. Հեղինակը բնիկ Ռոստովու բնակիչ է, և ուրեմն դիտէ ճշմարիտը, և դիտաւորութեամբ է միղանչում, թէ նա նորեկ մարդոցմէն է, և դեռ ևս նոր է քաղաքացոց մէջ զբաղել և իւր տեղեկութիւնները ստացել է ժողովարաններու (ԿԼՈՒԲՆԵՐԻ) զրոյցներէն, թէ ոչ այսպէս է և ոչ այնպէս՝ այն կողմերու նկատմամբ, այլ միայն մէկ քանի բարեկամներու իմդրանօք է արձակել **"**-ը. դէպ ժամանակի ակնկալութեամբ. և ինչի պիտի չանեմ ասելով՝ բարի մարդոց հաճոյքը, երբ որ այս ախորժ է նրանց: Ինչպէս որ մէկ ժամանակ՝ մէկ քանի տարի առաջ ԴԷ ՌՈՍՍ անուանով մէկը, (Сынъ Отечества № 23, 1859 г.) յարձակելով Մարիուպոլցի ցուցոց վրայ՝ նոցա հետ միասին արձակերասան պատասխանումէր Նոր Նախիջևանցիներուն էլ (որ հասարակ թէ նոյն արուեստութիւններն են վայելում՝ ինչ որ նոքա). որպէս թէ Նոր Նա-

խիչևանցիք չեն թոյլ տալիս եղել մէկ քանի թափառականներու ձկնորսութիւն անել Ազովու ծովեզերքումը, չմոռնալով անգամ՝ թէ նոր Նախիջևան քաղաքը Դոն գետի վրայ է, ուրկից Ազովու ծովեզերքէն էլ հեռու։ Նմանպէս եւ այժմ յիշեալ յօդուածի պ. հեղինակը՝ սկսելով իր պատմութիւնը քարտէզին կանանցակերպ նշաններէն, որ մէկ ժամանակ կանգնեցրած էին Ռոստովու եւ Նոր Նախիջևանայ միջոցը գտնուած տարածութեան մէջ, անց է կենում նոցամէն դէպի մարդկեղէն կանայքը եւ աղջկունքը, որոնց որ Նոր Նախիջևանցիք՝ որպէս թէ չեն թոյլ տալիս եղել բերել ծախել Նախիջևանումը զանազան կնոջ հարկաւոր ուալիքներու պիտոյքը, յետ այնորիկ բուժանակից է լինում ժողովրդեան հրճուախառն ապատրութեան Նոր Նախիջևանումը սուրբ տաճարի հիմնարկութեան, որոյ չինութեանն իբր թէ երկար ժամանակ արգելք էին դարձել Հայերը՝ միայն չրկամենալով տեսնել իրանց մէջ Ռուսաց եկեղեցի եւ մատնացոյց լինելով այս քաղաքի աջողակ տեղւոյ դրութեան, որ ձեռնում ունի աւելորդապէս պատուական վճռակներ, վերջացնում է յօդուածը՝ այսպէս համոզուած, թէ չատ չի ուշանար, որ Ռոստովու հողի սահմանը կըլայնանայ ի վնաս Նոր Նախիջևանայ հասարակութեան, որ ունի, ասում է առանձին ներքին կառավարչութեան եղանակ (администрація) հիմնած վաղանցեալ արտօնութիւններու սկզբանց վրայ, որովհետև Հայերը չեն տալիս ոչ զօրաժողովի եւ ոչ զօրանիստի հարկ (не рекрутской и не квартирной повинности)։ Նոր Նախիջևանայ Հայոց Մագիստրատը ընտրուած Հայազգի անդամներէն կազմուած՝ համախմբում է իր մէջ քաղաքական կառավարչութեան ամէն մասունքը, դատաստանական, ոստիկանական եւ անտեսական (судебную, полицейскую и хозяйственную части)։ Հայերը չատ են վախենում իրանց անհրաժեշտ մատուցութիւնէն Ռոստովցոց հետ մէկ քաղաքական հատարածութիւնն դառնալով, որ (Հայերու կարծիքով) կարող է պատահել ժամանակի հանգամանքներէ։

Տէրութիւնը արդէն թափանցում է այս քաղաքներու վիճակի մէջ, որոց մէկը ունի չատ չատ, եւ միւսը համարեա թէ ոչինչ. մէկը վայելում է առանձին կառավարչութիւն եւ առանձնաշնորհութիւնք, իսկ միւսը ունի կանոնաւոր բարեկարգութիւն քաղաքական եւ կրում է ամէն հարկերը, եւ այլն։

Այս անհարկութիւնները, եւ նմանպէս բոլոր յօդուածը պ. հեղինակի, որ գրած է, ինչպէս վերը ասացինք, կամ դործոյ անգիտութեամբ, կամ թէ դիտակցութեամբ կամաց, մեծացնելով մէկ առարկան, կիսակատար թողնելով միւսը եւ ուրիշ մեկնութիւն տալով մնացածներուն՝ ըստ իւրումն, Նոր Նախիջևանայ բնակիչ Հայերուն ցոյց են տալիս ինչպէս մէկ վայրենիք, որ անարժան են չնորհաց բարերար Տէրութեան, եւ վնասակար ընկերութեան համար կրօնական կողմն։

Եւ որովհետև արդարութիւնը պահանջում է, որ տպագրած խօսքերու սխալները ուղղուին տպագրած մեկնութիւններով, այս պատճառաւ՝ նոյն ինքն արդարութիւնը չարժեց մեր մէջ բազմանք յայտնել ընթերցողներուց, որ կարդացել են այն յօդուածը այս մեր ծանօթութիւններէն էլ։

Պ. հեղինակի այն յօդուածի մէջ պատմած քարեայ արձանները, որքան որ մեզ յայտնի է էին Նոր Նախիջևանայ եւ Ռոստովի սուրբ Դիմիտրի բերդի հողերու սահման բաժանող նշաններն, եւ ոչ Ռոստովի, որոյ այժմեան տեղը այն ժամանակ անմարդաբնակ դաշտ էր. կամ բերդին դուրս արուարձանն Ռուս ազգաբնակ եւ ամէն ձեռներնասութեամբ (որ այն ժամանակ չատ չէր) զբաղեալ մարդիկ էին։ Ռոստովի եւ Նոր Նախիջևանայ միջոցը գտնուած տարածութեան մէջ, ինչպէս ասացինք, կանգնեցրած էին քարեայ արձանները

չրիար եւ ոչ կէս վերստաչափ, այս պատճառաւ Նախիջեանայ հասարակութիւնը իւր դասակին-քով նշանակել էր Ռուսաց ակեղեցւոյ չինութեան համար տեղ քաղաքի կենդրոնումը մէկ ընդարձակ արդասաց։ Այս ազատագանձամ է արդեօք թէ Հայերը չանք էին անում խափանարար լինել այն ձեռնարկութեան, թէ նորա հակառակ պիտի համարել, որ այս անգքը իր հեղինակին միմիայն առիթ արտայայտել իւր թշնամական զգայմունքը Հայերու դէմ։

Պատշաճ է արդեօք ասի եւ իցէ իւր դիտաւորութիւնները դնահատելը Աստուծոյ ասն անուանով, որոյ չինութեան միտքը առաջին անգամ ընկալ է ինչպէս որ ասում է Պ. հեղինակը, Պաւլ Իօակիմովիչ Կոլոմնովի միրաը, որ միշտ ազնիւ բնաւորութեամբ, կըրթութեամբ եւ ճշմարիտ քրիստոնէական զգայութեամբք հանդիպացած մարդ էր, եւ ընդ նմին հետ Ռուսաց վոլ բնակիչներու ակռմնքներէն եւ ազգասիրութեամբ դրգռուած բազմագոյ հասարակութեան, իբր թէ իւր մէջէն ուզում է եղել տարամերժել Ռուսաց եկեղեցին, երբ որ բազմագոյ հրահանգուած եւ կիսահրահանգ աշխարհքին լաւ յայտնի է, որ Հայերը կրօնամոլ չեն եւ այլոց խոչընդոտ չեն ոչ ուրեք եւ ոչ երբէք։

Երբ որ սուրբ գրոց ասածով մէկ մարդ միայն Աստուծոյ անունը ի մտում յիշելով ինքն իրան ձգում է ատելի պատժի տակ, մի՞թէ քրիստոնէի համար զարհուրելի չէ, (սակայն թող նորէ մնդ Պ. հեղինակը, եթէ ուրիշ դասնութիւնէ է ինքը) Աստուծոյ անունը չինել մերձաւորին միտ տալու դէնք։ Սինք հաւատում ենք, որ Աստուծոյ դատաստանը մեր ամէն հասարակաց գործքերու մէջ անխուսափելի է, այս պատճառաւ եւ ըստ քրիստոնէական պարտաւորութեան՝ խնդրելու է Պ ԻՆՏՐԻԳԱՆԹՆԵՐԷՆ, որ Աստուծոյ սիրոյ համար, իրանց կենցաղական խազարկութիւններու մէջ՝ չզգործ աձեն ոչ կրօնական եւ ոչ եկեղեցական սկզբունք։

Օտարոտի լինն է, նաև անհանգանալի խակ, հեղինակի կարծիքը, իրբ թէ Հայերը մէկ երկիւղ ունին Ռուսաստան բնակիչների միաւորութեան եւ մէկ քաղաքական հասարակութիւն կազմելու համար. որ իրբ թէ նոյնպէս այս է եղել պատճառը, որ իրանց քաղաքի մէջ Ռուսաց եկեղեցի չինելը մերժում ու հակացնում էին։ Երբ որ Հայերը ունին իրանց համար ապահոված արքայական խօսքը, որ նոցա չնորհած դերապոյն Պարզևագրի մէջ ասած է. «Ձեր (ՀԱՅՏԵՐՈՒ) գաղթականաց բնակութեան դիւրութիւններ տալու համար, հաստատել եւ տալ Աղուլու գաւառի մէջ միւս գաղթականներէն որոշուած առանձին վիճակ, եւ այլն. կամ յետ բնակութեամբ լցնելոյ որոշուած Նախիջեան անունով քաղաքի Պօլսոզենկի հողաբաժանի մօտ, տալով նորան արօտատեղի տասնեկուհազար օրավար տեղ, հրամայեմք կարգադրել Մագիստրատ եւ նորա մէջ կատարել ամէն դատաստանը եւ իրաւատեսութիւնը՝ ձեր սովորութեամբ՝ դարձեալ ձեր մէջէն քուէարկութեամբ եւ կամ վիճակաւ ընտրուած դատաստանալեաց ձեռքով. եւ այլն», ուրեմն Հայերը ոչ թէ միայն պարտաւոր չեն կարծել՝ թէ կարելի է նորանց երբ եւ իցէ միաւորել եւ դառնալ մէկ քաղաքական հասարակութիւն Ռուսաստանոյ, կամ որ եւ իցէ ուրիշ ժողովրդեան հետ, այլ եւ պիտի խափան չըկարողանան մտքերը բնութիւն, ինչպէս որ ընթերցողը յայտնի տեսնում է, այնպիսի կասկած, թէ մէկ օր կարելի է նորանց ձեռքէն խլել մէկ կտոր հող կամ կալուած, որն որ այժմ նոքա վայելումեն իրանց արտօնութիւններու եւ իրաւունքներու վրայ, որն որ իրանց բազմագոյ հասարակութեան ամենաողորմածագար պարգևագրով տուած է հանդիսաւոր, ազդէ ազդ եւ յաւիտենական ժամանակաւ։ Այս մի այնպիսի պարգևագիր (привилегія) չէ, որ տրվում է ամէն նոր գիւղի համար միշտ սահմանաւոր ժամանակաւ, որոյ ժամանակակիցը երբ որ լրանում է, այն պարգևագիրն էլ կորցնում է իւր զօրութիւնը եւ նշանակութիւնը. այլ մէկ այնպիսի վաւերագիր է ժողովրդեան եւ տէրութեան մէջ, որ ոչնչ հնութեամբ չի փոփոխուիր, եւ նորա համար այնպէս հարկաւոր մտածելը, ինչպէս որ թոյլ է տալիս իրան այն յօդուածի հեղինակը, աւելի քան թէ անվայելուչ։

Հ.

ԿԱՂԿԵՄԷՆ

ԲԱՖՏ ԳԸՐՈՂԻ ՀԷՔԻԱԹԸ։

Էլել է ու չէ էլել, մի թաքաուր է էլի։ Ուռնենում է մի հասակն առած վուրթի։ Սա մի օր առուտհան իր նաղլը վէղերով դուս է գլնում մերին հուրս անելու։ Շատ է ման գալի, քիչ է ման գալի, հասնում է մի մինձ մերին։ Տեսնում է, վուր հիւռու, մերու գըլխումը, մի բացըր տիղ, մի օթախ է շինած ու նրա բուխրէնն մուխ է դիվըր դալի։ Թաքաուրի վուրթին ուզում է իմանայ, թէ էս ի՞նչ պիտի ըլի։ Գընում է դիրա էն մուխը, իր մարթ կերանցը թողնում է էնդի հիւռու մոդիկ տիղ ու ինքը տուն է գընում էն օթախը։ Թումի նըստած է ըլում էնդի մի սիպտա միրքով ծիր մարթ, առչիվը սոթ է ունենում դըրած, սոթի վրայ մի դաւթար-թանաքաման ու դալամ։ Հարցընում է թաքաուրի վուրթին նրան, թէ օվ իս, ի՞նչ իս շինում էստի, էս միրում մէնակ։ Նա թէ, ի՞նչ իս հարցընում—էկիլ իս, անց կացի ճամփէս, գընամ։ Իժում հնդրդա աղանչաք է անում թաքաուրի վուրթին, վուր էն ծիր մարթուն դրուստ ասեցնիլ է տալ։ Ծիրը թէ, իս բախտ գըրուղն իմ, կօսէ, էս դաւթրով մարթու ճակտին գըրածն իմ իմանում։ Խնդրում է թաքաուրի վուրթին, վուր իր ճակտին գըրածն ասէ իրան, պատմում է իր օվ րլիլը։ Ծիրը շուռ ու մուռ է տալի էն դաւթարը, կարթում է ու ասում է նրան թէ, թաքաուրի վուրթի՛, էրեվաց քու իղբալը. քու բախտն էսինց է նօռում, վուր դուն փըլան վրան նախրապի ախչիկը պիտիս ուղի, նա է քու նասիբը։ Թաքաուրի վուրթին շատ նիղանում է, բարկացած դուս է գալի էնդանց ու ման է գալի էլի իր մարթ կերանց հիւղ էն մէրումը հուրս անելու։ Մըթնում է, տուն չիդ գալիս մէրու վուրըում տեսնում է թաքաուրի վուրթին մէ քոխի։ Տուն է գընում էն քոխին։ Մէ պըստի տախտի վրայ հիւանդ ախչիկ է ըլում պառկած, ախկատ հէրն ու մէրը գիդնի վրայ նըստած մասլահաթ են էլի անում ախչիկը քընած է

ըլում նրա տուն գընալու վուխտը: Թաքաուրի վուրթին վարաուրդով իմանում է, վուր տանտերը մէ խիլճ նախրապան պիտի ըլի: Միան է գալի էն ծիր բախտ գըրդոյի խօսին ու փիքը է անում, վուր մէ օլին գայ նախրապանի ախչկան: Խնդրում է նախրապանին, թէ էս գիշեր թող կօսէ, էստի ըլիմ, մինացալ, չիմ կանայ տուն գընայ: Լաւ չէր ուզում նախրապանը, նրան ուներուն, տիլ չունիմ, կօսէ, տամ էլ «չէ» չէր ասվի: Թաքաուրի վուրթին զըրգում է իր մարթկուրանցը, բլօմա խօրագ է բերիլ տալի, գինի ու էն նախրապանին ու նրա կնգան լաւ լագաթի հարփեցնում է, հնդիկվէտ քընեցնում է: Իփոր դիփուները քընած խռռում էին, վիր է կենում էս քուռ Թաքաուրի տըղէն, հանում է խանջալն ու խըփում հիւանդ ախչկայ փուրում,—իր խիլքում սըպանում է, գլուխը մէ տապրկով էլ օսկի է գընում ու հայդէ, քաշվում է հնդանց դիրա տուն: Սըպանեցի, պըրծայ, այ քաւթառ, ասում էր իրան իրան Թաքաուրի վուրթին, սա՞ էր իմ մուրազը, հնդըգայ ի՞նչ ասիմ քիզ, քանի դուն վուռնչիչ չը գիտենաս, վուռնչիչ չըլիս իմանում, բախտ գըրդոյ, էստի լինէ համա փամ լին բաց անում, մարքարէութին լին անում—իմանում ըլիս իմ քին, քիզ համա էլ լաւ կուլէր: Էս Թահար խօսկերով հովցաւ, պրծաւ Թաքաուրի վուրթու սիրտը: Գանք հիմի, տեսնինք ի՞նչ հալուին լին նախրապանինք էն գիշերը լուսանալիս: Լուսանում է, ուշիլ լին գալի նախրապանն ու իր կնիկը, վիր լին կենում տեսնում լին, ի՞նչ լին տեսնում: Ախչկայ փուրը կորած է ու հնդգամի արուն ու չուբ է գընացի, վուր քոխում գուբ գուբ կանգնիլ էր կարմիր ու սիզաակ: Թուրմ էն հիւանդ ախչկիը քանի տարի է ըլում ծգալմանկ է ունենում փուրն ուռ իլ է ու նրա միկու երջում էլի Թուրմ ամէն տեսնողն ու լսանողը: Թաքաուրի տըղի խանջալը հետի Թահարն է դնըչում էն ախչկայ փուրին, վուր սըպանելու սիլ նրան բըծրչկում է, խանջալը նրա համա դիլ է գառնում փուրում դուբ էլած արուն ու չուբը դուս է գալի ու ախչիկը պըրծընում մէ քանի օրուրը: Վիր լին կանում տապրկով օսկին, գընում լին քաղաք ու տուն ու տիղ լին գառնում օրինաւոր կարգով ու սարքով: Ախչկան մարթու տալու լին հադրում ու օր օրի վրայ մընում լին էլի, վուր բախտը բայ ըլի: Մէ օր էն Թաքաուրի վուրթին անդ է կենում տեսնում է մէ տան կըտիրը սիրուն ախչիկ զուրած, չանդրած: Նախրապնի ախչիկն է ըլում էն ախչիկը: Թաքաուրի տըղէն խիստ հաւնում է էն ախչկան, շատ դուր է գալի աճկումը, կընում է ասում է իր հօրը, թէ հէնց էնէնց մէ սիրուն ախչիկ տեսայ ու նրան իմ ուզում, թէ գուզիմ նրան, թէ չէ ուրիշ օչովին չիմ ուզի, օչով ամկումը չէ գալի: Թաքաուրը կամք է տալի: Թաքաուրի վուրթին ուրախ ուրախ գընում է, գինում է էն ախչկայ տունը, խօսում է նրա հօր ու մոր հետ ու էն շատ լինելվէտ վրտահվում է ախչկայ վրայ, հարսնիք է անում մինչ խարըճներով օլան օր ու օլսը գիշեր: Էսկնց բախտաւորվում է էն նախրապնի ախչիկն ու կատարվում է բախտ գըրդոյ խօսկը: Թաքաուրի վուրթին ինչ գիտէր սա, թէ իր ուզած ախչիկը նախրապնի ախչիկն է, իսկի փրքրում էլ չէր անցկացնի: Անց է կենում ժամանակ ու Թաքաուրի վուրթու բախկիրը մէ օր բաղնըսում վարաուրդ լին անում, վուր իրանց հարսի փուրը հնկնց հրգէն ու մէկ կոպտան արած է, կարաճի պես է: Էս բանը Թաքաուրի վուրթու անգամն է նընդնում, հարց ու փուրց է անում իր կընդան, վուր ասէ, թէ ինչ՞ումն է հնկնց: Ախչկիը բայ է ըլում, չիլ է ասում իր գլխին անց կացած բանիրը մէ մէկ: Թաքաուրի վուրթին էն սահաթին մտաին կրճում է, միան է գալի էն բախտ գրրող ծիրը: Էն ժուզդն է իմանում նա, վուր դուրթ, ինչըր մարթուս ճահտին գըրած է, չի ըլի, թէ չը կատարվի: Մարթուս բախտը մերումն էլ կու ճանգէ ու քախկումն էլ, չուստ կու գըրնէ—ըլելու բանը պիտի ըլի: Փառք հրիստ Աստուն Թաքաուրի տղէն, վուր իրան նասիբ էլած նախրապնի ախչկան հնկնց հրաշիվ ազատից ու իր փուղով նրան մարաքելը խառնից ու իր կնիկ շնից: Մարթ ու կնիկ բախտաւորութիւնի մէջն անցկացրին իրանց օրն ինչորի մահը: Չարն հնդի, բարին հատի:

Գ. Տ. Ա.

ՕՐԱՑՈՑՑ

1864 Յունուարի

Ձէյթունցի իշխանաց և Վարդան Պամբակունոց Պետերբուրգում լաւ վարագրած պատկերներով զարդարած, ծախսում է Ի. Տէր Մկրտչեանցի և ընկ. գրավաճառանոցում: Գինն է մէկ մէկ դնողին 20 կ. իսկ 50 հատ առնելի դնողներին լինում է 100ին 10 զեղչ: այսինքն մէկը 16 կոպէկ հաշուելով:

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ (Ի ՏՊԱՐԱՆԻ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ
Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ· (ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ·

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ. 4 января 1863 г.
ТИФЛИСЪ